երբ տեղի վրա պեղումներ արվեն հատակաձևը գտնելու համար, եթե, իհարկե, տեղում որևէ բան պահպանվել է երկու դավիթների շինության և նրանց ներսում իրար կողքի խիտ կերպով շարված գերեզմանների պատճառով։ Սակայն Սանահնի այս հնագույն դավիթը մի հետաքրքիր փաստ է այն մասին, որ Բագրատունյաց Հայաստանում, 10-րդ դարում գոյություն է ունեցել ժամատուն կամ դավիթ կոչվող եկեղեցու կից շինությունը, այն էլ այնքան ընդարձակ, որ միաժամանակ ծառայել է իրար մոտ, բայց միմյանցից անջատ երկու եկեղեցիների, ինչպիսիք են Սանահնի Աստվածածին և Փրկիչ տաճարները։

Նկ. 23. Գուրգեն և Սմբատ թագավորների բարձրաքանդակը Ամենափրկիչ եկեղեցու աբսիդի՝ դրսից, որոնց գլխին՝ № 3 արձանագրությունը։

Ճարտարապետ Թ. Թորամանյանն այն կարծիքին էր, որ ժամատներն ու դավիթները հայոց եկեղեցիների մեջ առաջ են եկել